ԴԻՊՈՒԿԱՀԱՐՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս հոդվածը նպատակ ունի ընթերցողին ծանոթացնել ութ վարժությունների հետ, որոնք կիրառվել են դիպուկահարների դպրոցներից մեկում՝ զինծառայողների պատրաստության դասընթացներում:

Վարժություն 1. «Դիպուկահարի որակավորում»

Անհայտ հեռավորությունների վրա (400-ից 600 մ) տեղադրված են երկու հասակաթիրախ:

Խնդիրը:

Դիպուկահար զույգին անհրաժեշտ է առանց հեռաչափի, նշանոցի ցանցի միջոցով, խողովակի կամ հեռադիտակի օգնությամբ որոշել նշանակետի հեռավորությունը և յուրաքանչյուրին կատարել մեկ կրակոց:

Գնահատականը:

- միավորների քանակով;
- միավորների հավասար քանակի դեպքում՝ լրացուցիչ կրակոց:

Վարժություն 2. «Հրաձգություն փոքրաչափ նշանակետին»

Դիպուկահար զույգը կրակային բնագծում է: Կրակելու դիրքը՝ կանգնած վիճակում: Կրակում է դիպուկահարներից մեկը, երկրորդը՝ ճշգրտում է: Թիրախը

տեղադրված է 500-ից 600 մ հեռավորության վրա, որը հեշտությամբ ավերվում է (աղյուս):

Ձեռքերի վրա հենումը արգելված է:

Մրցավարի «կրակ» հրամանից հետո դիպուկահարին անհրաժեշտ է նվազագույն ժամանակում խոցել թիրախը:

Կատարվում է 10 կրակոց:

Գնահատականը:

1. Թիրախի խոցման դեպքում

- կրակոցների քանակով;

- ծախսված կրակոցների հավասարության դեպքում՝ ծախսված ժամանակի քանակով:

2. Երբ թիրախը չի խոցվում

- աղյուսի հետևում տեղադրված կրծքային թիրախի միավորների քանակով:

Վարժություն 3. «Սպորտային»

Վարժություն 3.

Հեռավորությունը 300 մ է: Յուրաքանչյուր դիպուկահարի համար թիրախների քանակը 1-ն է (թիրախ թիվ 4-ի տրամագիծը 500 մմ է՝ շրջանակներով): Յուրաքանչյուր դիպուկահարի համար կրակոցների քանակը՝ 5 փորձնական և 20 ստուգարքային, վարժությունը կատարելու ժամանակը՝ 20 րոպե:

Խնդիրը:

Զբաղեցնել կրակային բնագիծը, իրականացնել հատկացված 20 կրակոցներից մի քանիսը և հավաքել առավելագույն միավորներ:

Գնահատականը:

- Ըստ միավորների քանակի:

Վարժություն 4. «Ոստիկանական: Հրաձգություն ըստ հրամանի»

Զույգը կրակային բնագծում է: Հեռավորությունը 150-200 մ է: Թիրախի վրա նշված են խոցման գոտիները: Հրաձգություն ըստ հրամանի: Յուրաքանչյուր դիպուկահարին տրվում է 3 կրակոցի հնարավորություն: Երկու դիպուկահար կրակում են միաժամանակ:

Խնդիրը:

Հետևել թիրախին, կրակել «թայմերի» հրամանով, խոցել թիրախը առաջին կրակոցով մեկ վայրկյանի ընթացքում: Եթե դիպուկահարը կրակում է հրամանից առաջ կամ մեկ վայրկյանն անցնելուց հետո, կրակոցը չի հաշվվում:

Գնահատականը:

- Ըստ միավորների քանակի

Վարժություն 4.

Վարժություն 5. «Ոստիկանական: Հրաձգություն փոքրաչափ թիրախներին մոտեցումներով»

Վարժություն 5.

Հեռավորությունը 150-200 մ է: Թիրախների քանակը 3-ը (թիրախի տրամագիծը 70 մմ է շրջանակներով): Յուրաքանչյուր թիրախը խոցելու համար դիպուկահարին տրվում է 3 կրակոցի իրավունք: Մոտեցումը կրակային բնագծին մինչև 100 մ: Բարձրանալ շենքի երկրորդ հարկ իմպրովիզացված միջոցների օգնությամբ՝ պարան «կեռիկով» կամ ձողի միջոցով: վարժությունը կատարելու ժամանակը՝ 1 րոպե:

Խնդիրը:

Զբաղեցնել կրակային բնագիծը: Յուրաքանչյուր դիպուկահար հաջորդաբար պետք է խոցի 3 թիրախները:

Գնահատականը:

Ըստ միավորների քանակի, որոնց հավասարության դեպքում՝ ծախսված ժամանակի:

Վարժություն 6. «Ոստիկանական: Հրաձգություն ապակու միջով»

Դիպուկահար զույգին տրվում է մարտական առաջադրանք՝ ոչնչացնել շենքում պատանդ վերցրած ահաբեկչին:

Ահաբեկիչը դիտարկվում է պատուհանից (ապակու հաստությունը 20 մմ է, ահաբեկչի գլուխը գտնվում է շենքի խորքում՝ պատուհանից 1,5 մետր հեռավորության վրա): Հեռավորությունը 150 մ է, անհրաժեշտ է կրակել 12-15 մ բարձրությունից վերևից ներքև: Նախապատրաստման ժամանակը 3 րոպե: Կրակել «կանաչ լույս» հրահանգով:

Թիրախը ահաբեկիչ է՝ նշագրված խոցման գոտիներով:

Խնդիրը:

Ոչնչացնել ահաբեկչին և իջնել պարանով՝ լեռնագնացության սարքավորումների օգնությամբ:

Գնահատականը:

Ըստ միավորների քանակի, որոնց հավասարության դեպքում՝ «կանաչ լույս» հրահանգից մինչև կրակոց ծախսած ժամանակի:

Վարժություն 7. «Գիշերային հրաձգություն»

Դիպուկահար զույգին հանձնարարվում է (նշվում է տարածքը) հայտնաբերել և ոչնչացնել անհայտ հեռավորության վրա (600-900 մետր) գտնվող հակառակորդի զինվորների խումբը: Դիպուկահար զույգը դիտարկում է նշված տարածքը: Հակառակորդը ներկայանում է 3 հասակչափ թիրախների ձևով՝ խոցման գոտիների նշագրումով: Թիրախները լուսավորվում են փոքր խարույկի արտացոլած լույսով: Զույգը զբաղեցնում է կրակային բնագիծը: Նշանակետի խոցման համար սահմանված ժամանակը, «կրակ» հրահանգից հետո, 5 րոպե է:

Խմբի ոչնչացման համար սահմանված կրակոցների քանակը 5-ն է (արգելվում է լուսածրող գնդակների օգտագործումը):

Խնդիրը:

Քողարկվել, խոցել խարույկի շուրջ գտնվող բոլոր թիրախները, առանց ինքնահայտնաբերվելու:

Գնահատականը:

Ըստ խոցված թիրախների քանակի: Հավասար թվով խոցված թիրախների դեպքում՝ միավորների քանակով:

Վարժություն 8. «Գիշերային հրաձգություն»

Դիպուկահար զույգը գիշերային «որսի» մեջ է: Անհրաժեշտ է հայտնաբերել և ոչնչացնել հակառակորդի դիպուկահարին նշագրված շրջանում (մինչև 400 մետր անհայտ հեռավորության վրա): Դիպուկահար զույգը դիտարկում է նշված տարածքը: թիրախը թույլ լուսավորված փուչիկն է :

Զույգը զբաղեցնում է կրակային բնագիծը: Նշանակետի խոցման համար սահմանված ժամանակը, «կրակ» հրահանգից հետո, 5 րոպե է: Կրակում է մեկ դիպուկահարը: Կրակոցների քանակը սահմանափակ չէ, արգելվում է միայն լուսածրող գնդակների օգտագործումը:

Խնդիրը:

Քողարկվել, խոցել թիրախը:

Գնահատականը:

Ըստ թիրախը խոցելու համար ծախսված ժամանակի: Ծախսված ժամանակի հավասարության դեպքում՝ կրակոցների քանակով:

Աղբյուրը: Unfair Advantage·